

մնալ ուղղները (այսինքն Տաճկաստանէն եկող աշակերտները) ազատ են նաեւ Ռուսաց պատմութիւնը, մատենագրութիւնը եւ օրէնսգիտութիւնը սովորելէն:

իա) Ուսումնարանին մէջ դասախօսութիւնները առհասարակ հայերէն լեզուով կ'լինին. բայց Ռուսաց լեզուի, Ռուսաց պատմութեան եւ մատենագրութեան դասերը ռուսերէն կ'որոշուին, նմանապէս Գաղղիացոց լեզուի եւ մատենագրութեան դասերը գաղղիարէն: — Բաց յայնմանէ բարձրագոյն ուսմանց մէկըսնին առ այժմ՝ գաղղիարէն, մէկըսնին ալ ռուսերէն կ'ընան տրուիլ:

իբ) Ուսման վերոյգրեալ նիւթերէն դուրս ինչ լեզու կամ գեղարուեստ որուդէ մէկը դաս առնուլ տալ իւր որդւոյն այս ուսումնարանիս մէջ, զոր օրինակ՝ յունարէն կամ լատիներէն կամ գերմաներէն, եւ երաժշտութիւն, կամ զինավարժութիւն, նոցա համար սահմանեալ առանձին վճարքը պիտի հատուցանէ:

իզ) Տարեկան հանգստեան կամ պարապոյ միջոցը ամբողջ Յուլիս ամիսն է. եւ այն միջոցը կարող են աշակերտք իրենց աներն երթալ՝ եթէ ծնողք կամենան, եւ ճանապարհի ծախքը վճարեն:

Գ. ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ.

իզ) Խալիպեան ուսումնարանին ապրուստին ու պահպանութեանը աղբիւրներն են. ա, Խալիպեան Յարութիւն իշխանին նուիրած դրամագլխոյն եկամուտները. բ, Նախիջեւանի եւ Պեսարապիոյ վիճակին դրամագլխոցն եւ եկամուտներուն մէկ մասը. գ, Աշակերտներուն բերած թոշակները. եւ դ, Ուսումնարանին քով բացուած տպարանին աւ գրասենեկին եկամուտները: — Ուսումնարանին պահպանութեան աղբիւրներուն կարգը կ'համարուին նաեւ բարեպաշտ եւ ազգասէր անձանց ըրած նպաստները:

իե) Մեծ մտադրութիւն եւ ջանք կայ որ աշակերտաց կերակուրը չափաւոր լինի եւ սննդարար, ննջարանը մաքուր եւ օդահար, աշխատութիւնը զբօսանքով բարեխառնած, եւ ընդհանրապէս նոցա առողջութիւնը որչափ որ կարելի է խոհական չարքաշութեամբ ամբըցած:

իզ) Ուսումնարանին բժիշկը ամէն օր անպակաս այցելութիւն կ'ընէ հիւանդանոցին, ուր մասնաւոր Հիւանդասրահ կայ:

իե) Աշակերտաց հազուադէպ երկու տեսակ է, երկուքն ալ միաձեւ ու միօրինակ. մէկը դուրսը հագնելու՝ կապտադոյն չուխայէ, կայսերական հրամանաւ հաստատուած (մունսիր), մէկալը ներսը՝ ձմեռը սեւ չուխայէ, ամառը սեւ գունաւոր կտաւէ: — Ճերմակեղէնները ամառը շաքարէր երկու անգամ կ'իտխուին, ձմեռը մէկ անգամ: Այս բաներուն եւ ընդհանրապէս տղայոց մաքրութեանը յատկապէս ուշ դնողը Հանդերձապէսն է:

Ե. ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԻՒՆ.

իբ) Ուսումնարանին մէջ սաստիկ մտադրութիւն կ'լինի որ աշակերտք իրենց քրիստոնէական պարտքերը անպակաս եւ անպատճառ կատարեն. եւ կանոնապահ, հնազանդ, եղբայրասէր եւ քաղաքավար, համեստ եւ առաքինի լինելու ջանք ընեն:

իբ) Աշակերտք ոչ երբեք մինակ կ'մնան, եւ ոչ մինակ քալելու կամ զբօսանքի կելլեն, այլ միշտ վերակացու կ'ըրանուի հետերը. գիշերն ալ՝ բաց ի վերակացուէ՝ պահապան մը կ'հրկէ ննջարաններուն մէջ:

լ) Ամենայն աշակերտ պարտական է ամիսը մէկ անգամ նամակ գրելու իւր ծնողաց կամ ազգականաց: — Նամակներուն ծախքը ծնողաց վրայ է:

ԲԱՐՈՅԱԿԱՆ

Երբոր դպրոցի մը հիմունքը լինին երկիւղ Աստուծոյ եւ սէր առաքինութեան, երբոր աշակերտք սիրեն դպրոցը եւ պատկառին վարժապետներէն, երբոր վարժապետք իրենց նիւթական շահէն աւելի փնտռեն աշակերտաց կրթութիւնն ու յառաջադիմութիւնը, — նորա ամենայն կանոններն աղէկ կ'պահուին, եւ բարեկարգութիւնը անդրդուելի հաստատութիւն կ'ունենայ: